ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1956 Թ. ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի այս նիստում Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ պ. Մ. Տեր-Ստեփանյանը զեկուցեց Ճեմարանի 1955—1956 ուսումնական տարվա արդյունքների մասին, ապա խոսեց հաջորդ ուսումնական տարվա խնդիրների վրա, շեշտեց Ճեմարանի վերատեսչի և վերակացուի պաշտոնները ձեռնհաս հոգևորականներով փոխարինելու և ուսանողությանը համազգեստով օժտելու անհրաժեշտության վրա։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց Հոգևոր Ճեմարանում կատարված աշխատանքների մասին, ապա ծանրացավ ուսանողության թիվը առաջիկայում զգալիորեն ավելացնելու, Ճեմարանի ուսումնական մնայուն ծրագրերի կազմության հարցերի վրա։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց առաջիկա ուսումնական տարում զգալիորեն ավելացնել ընդունվելիք ուսանողների թիվը ինչպես արտասահմանի, այնպես էլ ներքին թեմերից, իսկ նոր ուսումնական տարվանից ունենալ Ճեմարանի ուսումնական կայուն և վերջնական ծրագիր։

1956 Թ. ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը խոսեց Մայր Աթոռի տպարանի մասին։ Վեհափառ Հայրապետը ուրախությամբ և գոհունակությամբ հայտնեց, որ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութը, գլխավորությամբ առաջնորդարանի և աղգային մարմինների, ձեռնարկել է 100.000 դոլարի հանգանակության («100.000-ի արշավ») հոգուտ Մայր Աթոռին նվիրվելիք տպարանի։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը Նորին Ս. Օծության այս հաղորդումը ընդունեց մեծ գոհունակությամբ։

Ապա Վեհափառ Հայրապետը խոսեց Մոսկվայի հայոց նորաբաց Ս. Հարությունն եկեղեցու վերանորոգման վիճակի մասին։

Սկզբնական շրջանի նյութական դժվարությունները հաղթահարելու նպատակով, որոշվեց Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդին իբր փոխառություն, բացառության կարգով, բաց թողնել 10.000 ռուբլի։

1956 Թ. ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ՆԻՍՏԻՑ

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետի առաջարկով Գերագոյն Հոգևոր Խորհուրդը զբաղվեց Ռումինիայի Հայոց Թեմը առաջնորդական տեղապահ դրկելու հարցով։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նկատի ունենալով Ռումինիայի Հայոց Թեմի թափուր վիճակը և ընդառաջելով Ռումինահայ Թեմական խորհրդի դիմումներին, որոշեց Ռումինիայի Հայոց Թեմի առաջնորդական ժամանակավոր տեղապահ նշանակել Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Եղիշե արեղա Սարգսյանին։

1956 Թ. ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում կարդացվեց Մոսկվայի Հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև արեղա Գևորգյանի և եկեղեցական խորհրդի զեկուցագիրը՝ Մոսկվայի Հայոց եկեղեցու վիճակի և եկեղեցու շենքի վերանորոգման հետագա աշխատանքների մասին։

Որոշվեց եկեղեցական խորհրդի կողմից ներկայացված վերանորոգչական աշխատանքների նախահաշիվը հաստատել հետևյալ փոփոխություններով.

Ընթացիկ տարում վերանորոգել եկեղեցու միայն կտուրը, դռներն ու պատուհանները, կատարել դրսի ծեփը և պատրաստել տախտակամած։ Մյուս աշխատանքները թողնել հետագայի համար։

Միաժամանակ Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց եկեղեցու վերանորոգման անհրաժեշտ աշխատանքների համար Մոսկվայի Հայոց եկեղեցական խորհրդին բաց թողնել ևս 20.000 ռուբլի, որպես փոխառություն։

Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Խորէն վարդապետ Էլչուջյանը նշանակվեց եկեղեցիների վրա իբրև վերահսկիչ, հանձնարարելով նրան, Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետի հրամանով և կարգադրությամբ, պարբերաբար այցելել թեմերն ու եկեղեցիները, ապա զեկուցել Վեհափառ Հայրապետին։

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում քննության առնվեց Երևանի Ս. Սարգիս եկեղեցու մուտքի վերակառուցման ծախսերի նախահաշիվը և որոշվեց հաստատել ներկայացված նախահաշիվը և առաջարկել Մայր Աթոռի տնտեսական կառավարչության՝ հսկողություն սահմանել կատարվելիք ծախսերի նկատմամբ։

Նմանապես քննվեց Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու բակի պարսպի կառուցման նախահաշիվը և որոշվեց ստուգել այն և ներկայացնել Գերագույն Հոգևոր Խորհրդին։

Ժողովում լսվեց նաև Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Վարդան քահանա Գրիգորյանին կենսաթոշակ նշանակելու մասին եկեղեցական խորհրդի միջնորդությունը և որոշվեց արժանապատիվ քահանա հորը նշանակել ամսական 300 ռուբլի կենսաթոշակ սույն թվականի հուլիսի 1-ից։